ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/63, 09.05.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողով

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Տեսամոնիտորի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման մրցույթի գնահատող հանձնաժողովի առ 21.04.2020թ. N4 Արձանագրության 5-րդ կետով, այն է՝ «...Մասնակիցների կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են...» և 8-րդ կետով, այն է՝ «...առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից...» կայացրած որոշումները՝ համարել անվավեր, իսկ «Հպարտ քաղաքացի», «Այյունետվորկս» և «էլեկտրոգրուպ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված Հայտերը մերժել:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Medium GmbH Key Distributor
Mitsubishi Electric Corp. / SMART Technologies Inc. / AVer Information Inc. / CleverTouch
Regional Distributor
Milestone AV Technologies / NEC Display Solutions / Panasonic
Country Distributor
TANDBERG Premier / Polycom Certified Channel
PARTNER

FIRM ALPHA CO., LTD
since 1995

Tekeyan Business Centre,
50 Khanjyan St., Yerevan 0025,
Republic of Armenia
Phone/Fax: + 374 10 52 13 56; + 374 10 55 56 13
E-mail: info@alpha.am
URL: www.alpha.am

N 1/10-05/07
07 մայիսի 2020թ.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Մելիք-Ադամյան փող. 1

Բողոք բերող անձ՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող., շ. 50, «Թեքեյան բիզնես կենտրոն»

Պատվիրատուի անվանումը՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողով»
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան 0095, Մ. Բաղրամյան պող., 19

«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման մրցույթ՝ տեսամոնիտորի մատակարարում

ԲՈՂՈՔ

Սույնով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (*ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող., շ. 50, «Թեքեյան բիզնես կենտրոն», Հեռ. +374 10 52-13-56, E-mail: info@alpha.am*) **պաշտոնապես** ներկայացնում է ***բողոք՝*** **ՀՀ Ազգային ժողովի «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25»** ծածկագրով գնանշման մրցույթի անցկացման ընթացքում գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և ՀՀ գնումների մասին գործող օրենսդրության **կոպիտ խախտումների** դեմ:

Ս.թ. ապրիլի 10-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն *ARMEPS* համակարգի միջոցով info@armeps.am պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է ՀՀ Ազգային ժողովի կողմից **«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25»** ծածկագրով ***էլեկտրոնային ձևով*** անցկացվող գնանշման մրցույթի հրավերն (*Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ. 6036595] ՄՀ-ի հրապարակում*), որի **1-ին** և միակ չափաբաժնով նախատեսվում էր Պատվիրատուի կարիքների համար ձեռք բերել տեսամոնիտոր (*Հրավերի Պայմանագրի Հավելված №1-ի՝* ***«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»*** *պատճենը՝ ընդամենը 2 (երկու) թերթ կցված է սույն բողոքին*):

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հրավերով նախատեսված ժամկետում և կարգով *ARMEPS* համակարգի միջոցով ներկայացրել է իր հայտը 1-ին չափաբաժնի մասով:

Ս.թ. **ապրիլի 22-ին** «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն *ուշադիր ուսումնասիրելով* www.armeps.am կայքում հրապարակված **«ՀՀ ԳՀԱՊՁԲ-20/25»** գնանշման մրցույթի մասնակիցների Հայտերը գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Սաղաթելյանի՝ hermineh@parliament.am էլեկտրոնային հասցեին (*պատճենը՝* **ՀՀ ԱԺ Աշխատակազմ** staff@parliament.am էլեկտրոնային հասցեին), ուղարկված էլեկտրոնային

07.05.20

նամակով **պաշտոնապես** տեղեկացրել է գնահատող հանձնաժողովին, որ «Այյունեթվորկս» ՍՊ, «Էլեկտրոգրուպ» ՍՊ և «Հպարտ քաղաքացի» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված Հայտերի փաթեթները՝ մասնավորապես նրանցում առկա **Հավելված 1.1**-ը **չեն համապատասխանում հրավերի պահանջներին** և տվյալ **հավելվածներն ենթակա են շտկման** (*նշված ընկերությունների Հավելված 1.1-ի պատճենները՝ ընդամենը 4 (չորս) թերթ կցված են սույն բողոքին*):

Ավելի քան մանրամասն տեղեկատվություններ՝ նշված հավելվածների **հրավերի պահանջներին անհամապատասխանության** վերաբերյալ, ներկայացվել էին գնահատող հանձնաժողովի ուշադրությանը նշված էլեկտրոնային նամակին *կից ուղարկված* **N1/30-04/22** առ 22.04.20թ. **պաշտոնական նամակում**, որտեղ հստակ նշվել է, որ՝

1) «**Հպարտ քաղաքացի**» ՍՊԸ կողմից տրամադրված փաստաթղթերը (Հավելված 1.1) **չեն համապատասխանում** Հրավերի **պահանջներին**, քանզի՝

- մասնակցի կողմից ներկայացված **ֆիրմային անվանումը** ՝ **Տեսամոնիտոր (լրակազմ (Video Wall)** և **արտադրողի անվանումը՝ Philips inc. սխալ են** և **չեն համապատասխանում իրականությանը.**

- **լիովին բացակայում են ներկառուցվող համակարգչի** և **պատի կախոցի** ամբողջական նկարագրի տվյալները՝ **ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը.**

- **Philips X_Line_49_450CDM Direct LED** մակնիշի տեսամոնիտոր **ընդհանրապես գոյություն չունի**, ինչի մասին անվիճելի վկայում է *արտադրողի տարբեր տարածաշրջանային կայքերում* հրապարակված **պաշտոնական** տեղեկատվությունը:

2) «**Այյունետվորկս**» ՍՊԸ կողմից տրամադրված փաստաթղթերը (Հավելված 1.1) **չեն համապատասխանում** Հրավերի **պահանջներին**, քանզի՝

- մասնակցի կողմից ներկայացված **ֆիրմային անվանումը** ՝ **Տեսամոնիտոր, Համակարգիչ և Բրնակ,** ինչպես նաև **մակնիշը՝** 49BDL3005X **սխալ են** և **չեն համապատասխանում իրականությանը:**

3) «**Էլեկտրոգրուպ**» ՍՊԸ կողմից տրամադրված փաստաթղթերը (Հավելված 1.1) **չեն համապատասխանում** Հրավերի **պահանջներին**, քանզի՝

- մասնակցի կողմից ներկայացված **ֆիրմային անվանումը** ՝ **Philips BDL4988XC/00, ապրանքային նշանը՝ BDL4988XC/00** և **արտադրողի անվանումը՝ Philips & CO. սխալ են** և **չեն համապատասխանում իրականությանը:**

- **լիովին բացակայում են ներկառուցվող համակարգչի** և **պատի կախոցի** ամբողջական նկարագրի տվյալները՝ **ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը:**

Ելնելով վերը շարադրվածից նամակում *արտահայտվել էր կարծիք*, որ վերը թվարկված մասնակիցների հայտերը (**Հավելված 1.1**) համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի **41-րդ** կետի **ենթակա են շտկման** *մեկ աշխատանքային օրվա ընթացքում*:

Նույն էլեկտրոնային նամակով համաձայն վերը նշված **Կարգի 32**-րդ **կետի 4**-րդ **ենթակետի** և Հրավերի **8.8 կետի** պահանջների «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին խնդրել էր՝ ***հասանելի լինելուն պես*** տրամադրել իրեն բոլոր նշված մասնակիցների կողմից ներկայացված՝ ***արդեն իսկ շտկված*** Հրավերի N 1.1 Հավելվածների պատճենները (*նշված էլեկտրոնային նամակի և N1/30-04/22 առ 22.04.2020թ. գրության պատճենները՝ ընդամենը 4 (չորս) թերթ կցված են սույն բողոքին*):

Համաձայն ս.թ. **մայիսի 04**-ին ժամը՝ 17:39-ին *ARMEPS* համակարգի միջոցով info@armeps.am էլեկտրոնային փոստի հասցեից ստացված (*Ավտոմատ ծանուցում ARMEPS համակարգից - [ՄՀ.6036595] Արդյունքների հրապարակում*) «**ՀՀ ԳՀԱՊՁԲ-20/25**» գնանշման մրցույթի գնահատող հանձնաժողովի **Արձանագրության N4** առ **21.04.2020թ.** (*պարունակում է իր մեջ գնահատող հանձնաժողովի բոլոր ընդունված որոշումները ս.թ. **ապրիլի 21-ից** մինչև **մայիսի 04-ը** ներառյալ*) **3**–րդ կետի՝

«Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը՝ արձանագրեց, ներկայացված հայտերում կան **անհամապատասխանություններ**, մասնավորապես՝

«**ՀՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻ**» ՍՊԸ ՝ Շտկել **արտադրողի անունը, մակնիշը** (նշված մակնիշի մոնիտոր չկա արտադրողի կայքում և հնարավոր չէ հայտնաբերել համացանցում): Նշել **կախիչի** և **ներկառուցվող համակարգչի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը** և **արտադրողի անվանումը**:

«**ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ**» ՍՊԸ՝ Շտկել **տեսամոնիտորի մակնիշը**:

«**ԷԼԵԿՏՐՈԳՐՈՒՊ**»՝ Շտկել **մոնիտորի արտադրողի անվանումը**: Նշել **կախիչի** և **ներկառուցվող համակարգչի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը** և **արտադրողի անվանումը**:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով որոշեց՝ **նիստը կասեցնել**՝ առաջարկելով մասնակիցներին **մեկ աշխատանքային օրվա ընթացքում** *շտկել անհամապատասխանությունները* և ներկայացնել hermineh@parliament.am էլեկտրոնային փոստի հասցեին»:

Ինչն է հետաքրքիր՝ **Արձանագրության N4 3**-րդ կետում արձանագրելով, որ «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ-ի և «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **Հավելվածներ 1.1**-րում բացակայում են *«կախիչի և ներկառուցվող համակարգչի* **ֆիրմային անվանումը**, *ապրանքային նշանը»* գնահատող հանձնաժողովը *լիովին անբացատրելի պատճառով ուշադրությունից դուրս է թողնում* նույն կազմակերպությունների նույն փաստաթղթերում առկա *Տեսամոնիտորի* **ֆիրմային անվանման սխալ** լինելու փաստը, ինչպես նաև «Այյունեթվորկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **Հավելված 1.1**-ում ամբողջ ապրանքի **ֆիրմային անվանման սխալ** լինելու փաստը:

Ի դեպ *նույն զարմանալի աչկաթողությունն է* տեղի ունենում վերը նշված 3 ընկերությունների կողմից մրցույթի հանձնաժողովին տրամադրված ***արդեն իսկ շտկված* Հավելվածներ 1.1**-րի հետ և հանձնաժողովը *կրկին համառորեն չի տեսնում*, որ բոլոր 3 նշված մասնակիցների կողմից ներկայացված *առաջարկվող ապրանքների* **ֆիրմային անվանումները սխալ են** և **չեն համապատասխանում իրականությանը:**

Համաձայն **ՀՀ կառավարության** 04.05.2017թ. թիվ **526-Ն** որոշմամբ հաստատված «**Գնումների գործընթացի կազմակերպման**» Կարգի **41-րդ կետի պահանջների**, այն է՝ *«...Եթե **հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում** իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը **մեկ աշխատանքային օրով** կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը **նույն օրը** դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով **մինչև կասեցման ժամկետի ավարտը** շտկել անհամապատասխանությունը...»:*

Հայտերի բացման և **գնահատման նիստը** *ըստ նշված* **Արձանագրության N4** կայացել է **21.04.**2020թ.: Հետևաբար որոշման մեջ նշված **կասեցման ժամկետի** *(մեկ աշխատանքային օր)* ***ավարտ է** հանդիսանում* ս.թ. **ապրիլի 22-ը** *մինչև օրվա վերջ:*

Մինչդեռ «**Այյունեթվորկս**» ՍՊԸ-ն ներկայացրել է *շտկված* **Հավելված 1.1** գնահատող հանձնաժողովին **23.04.2020 թ.**, իսկ «**Էլեկտրոգրուպ**» ՍՊԸ-ն և «**Հպարտ քաղաքացի**» ՍՊԸ-ն *շտկված* **Հավելվածներ 1.1** գնահատող հանձնաժողովին են ներկայացրել միայն **27.04.2020 թ.**:

Այսինքն, հանձնաժողովի կողմից *ծանուցված բոլոր երեք մասնակիցներն էլ* **ակնհայտ խախտել են** Հրավերի Հավելված 1.1՝ **արդեն իսկ** ***շտկված տարբերակը*** ներկայացնելու «**Գնումների գործընթացի կազմակերպման**» Կարգի **41-րդ կետով սահմանված ժամկետը,** այն է՝ **22.04.2020 թ.**:

Իսկ «**ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25**» գնանշման մրցույթի գնահատող հանձնաժողովը փոխանակ ղեկավարվելով **Կարգի 42-րդ կետի պահանջներով** անմիջապես գնահատեր **անբավարար** և **մերժեր** բոլոր այդ երեք մասնակիցների հայտերը, **պարզապես անտեսում է** *ՀՀ* գնումների մասին գործող օրենսդրությամբ իրեն վրա դրված պարտականությունները և հանգիստ շարունակում է «բռնած գործը»:

Ավելին, **ապրիլի 28-ին** ժամը 12:33-ին էլեկտրոնային նամակով՝ Հ.Սաղաթելյանի hermineh@parliament.am հասցեից մրցույթի *բոլոր 4 մասնակիցներին* ուղարկվում է **պաշտոնական ցանուցում**, որտեղ նշվում է, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ N 526-Ն որոշման **40-րդ կետի 5-րդ ենթակետով** հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և ընթացակարգի մասնակիցներին հրավիրել *գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների* **04.05.2020թ.** ժամը 12.00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պ.19 հասցեում *(«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25» գնանշման հարցման հանձնաժողովի քարտուղար Հ.Սաղաթելյանի՝ hermineh@parliament.am հասցեից 28.04.2020 թ. ստացված էլեկտրոնային նամակի և Ծանուցման պատճենները՝ ընդամենը **2** (երկու) թերթ կցված են սույն բողոքին):*

Անկեղծ ասած, ծանուցում ստանալու հանգամանքը *տարակուսանք հարուցեց*, քանզի **գների նվազեցման ի՞նչ բանակցությունների մասին կարող էր խոսք լինել**, եթե վերը թվարկված բոլոր երեք մասնակիցներն էլ փաստաթղթերը գնահատող հանձնաժողովին էին ներկայացրել ***սահմանված ժամկետների*** **ակնհայտ կոպիտ խախտմամբ**:

Իր հերթին, նույն **ապրիլի 28**-ին ժամը՝ 12:02-ին՝ էլեկտրոնային նամակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ.Սաղաթելյանի՝ hermineh@parliament.am հասցեից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ստացել է վերը նշված երեք ընկերությունների կողմից **«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25»** գնանշման մրցույթի հանձնաժողովին տրամադրված **Հավելվածներ 1.1-ի *շտկված տարբերակները*** *(«Այյունեթվորկս» ՍՊԸ, «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ և «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ ընկերությունների **շտկված** Հավելված 1.1-ի, պատճենները՝ ընդամենը 5 (հինգ) թերթ կցված են սույն բողոքին):*

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ուշադիր ուսումնասիրելով մրցույթի մասնակիցների ***շտկված*** №1.1 Հավելվածների պատճենները գնահատող հանձնաժողովի քարտուղար Հերմինե Սաղաթելյանի hermineh@parliament.am հասցեին (*պատճեն՝* **ՀՀ ԱԺ Աշխատակազմ** staff@parliament.am), **30.04.20թ.** ուղարկված էլեկտրոնային նամակով **պաշտոնապես տեղեկացրեց** գնահատող հանձնաժողովին, որ մասնակիցների կողմից տրամադրված ***արդեն իսկ շտկված*** **Հավելվածներ 1.1** *նույնպես* **չեն համապատասխանում** «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնանշման մրցույթի **հրավերի պահանջներին**:

Մանրամասն տեղեկատվություններ նշված հավելվածների **հրավերի պահանջներին անհամապատասխանության** վերաբերյալ ներկայացվել էին գնահատող հանձնաժողովին նշված էլեկտրոնային նամակին կից ուղարկված **N1/30-04/30** առ 30.04.20թ. **պաշտոնական** նամակում:

Մասնավորապես, գնահատող հանձնաժողովի *հատուկ ուշադրությունը* բևեռվել էր հետևյալ փաստերին՝

1) **«Հպարտ քաղաքացի»** ՍՊԸ կողմից տրամադրված ***շտկված*** Հավելված №1.1 **կրկին չի համապատասխանում** Հրավերի **պահանջներին,** քանզի մասնակցի կողմից ներկայացված **Առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը՝ Տեսամոնիտոր (լրակազմ (Video Wall)** սխալ է և **չի համապատասխանում իրականությանը:**

2) **«Այյունետվորկս»** ՍՊԸ կողմից տրամադրված ***շտկված*** Հավելված №1.1 **կրկին չի համապատասխանում** Հրավերի **պահանջներին,** քանզի մասնակցի կողմից ներկայացված **Առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումները՝ Տեսամոնիտոր, Համակարգիչ և Բրնակ** սխալ **են** և **չեն** համապատասխանում **իրականությանը:**

3) **«Էլեկտրոգրուպ»** ՍՊԸ կողմից տրամադրված ***շտկված*** Հավելված №1.1 **կրկին չի համապատասխանում** Հրավերի **պահանջներին,** քանզի մասնակցի կողմից ներկայացված **Առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումները՝ Տեսամոնիտոր, Ներկառուցվող համակարգիչ** և **Կախիչ** սխալ **են** և **չեն** համապատասխանում **իրականությանը:**

23.11.1999թ. ընդունված **«Ֆիրմային անվանումների մասին»** ՀՀ օրենքն իր II-րդ գլխի, 2-րդ հոդվածի, 1 կետում *վերին աստիճանի պարզ* բացատրվում է, որ՝ ***«Ֆիրմային անվանումն*** այն անվանումն է, որի ներքո ***իրավաբանական անձն իրականացնում է իր գործունեությունը*** և ***զանազանվում այլ իրավաբանական անձանցից»:***

Ակնհայտ է և **բացառապես անվիճելի**, որ մասնակիցների կողմից առաջարկած **Philips** տեսամոնիտորների և ներկառուցվող համակարգիչների **ֆիրմային անվանումը** պետք է լիներ՝ հենց **Philips**, իսկ մոնիտորների կախոցներինը՝ համապատասխանաբար այդ կախոցներն *արտադրող կազմակերպությունների* ֆիրմային անվանումները:

Եթե հայտերը ներկայացրաց մասնակիցները *մինչ օրս անտեղյակ են դրա մասին*, ապա ինչպես ասվում է՝ *«մեկնաբանությունները պարզապես ավելորդ են»*:

N1/30-04/30 առ 30.04.20թ. **պաշտոնական** նամակում, ինչպես և **N1/30-04/22** առ **22.04.2020թ.** գրությունում *գնահատող հանձնաժողովի* **հատուկ** ուշադրությունն *ևս մեկ անգամ* բևեռվել էր այն փաստին, որ ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունը՝ ներառյալ ենթաօրենսդրական ակտերը, **բացառապես տարբերություն չի դնում** *տեխնիկական բնութագրերի, **ֆիրմային անվանման**, ապրանքային նշանի, մակնիշի և այլ տվյալների միջև* և **ոչ մի ձևով չի դասակարգում** այդ տվյալներն ըստ **կարևորության** կամ **նշանակության**, այսինքն բոլոր վերը թվարկված տվյալներն օրենսդրի կողմից դիտվում են **որպես իրավահավասար:**

Եթե տեղի ունենար վերը թվարկված տվյալների **որևիցե դասակարգում**, ապա այդ փաստը **պետք է ամրագրված լիներ** ՀՀ գնումների մասին գործող օրենսդրությունում:

Ելնելով վերը շարադրվածից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն եկել էր *եզրակացության*, որ **«Հպարտ քաղաքացի»**, **«Այյունետվորկս»** և **«Էլեկտրոգրուպ»** ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված ***շտկված*** Հայտերը (Հավելվածներ №1.1) **չեն համապատասխանում «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25»** ընթացակարգի **հրավերի**

պահանջներին և համաձայն **ՀՀ կառավարության** 04.05.2017թ. թիվ **526-Ն** որոշմամբ հաստատված «**Գնումների գործընթացի կազմակերպման**» Կարգի **42**-րդ կետի պետք է գնահատվեն **անբավարար** և **ենթակա են մերժման** (*նշված էլեկտրոնային նամակի և* **N1/30-04/30** *առ 30.04.2020թ. գրության պատճենները՝ ընդամենը 4 (չորս) թերթ կցված են սույն բողոքին*):

Ապրիլի 30-ից անցավ **4** (չորս) օր, սակայն «**ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25**» գնանշման մրցույթի հանձնաժողովից *վերոհիշյալ նամակին* այդպես էլ **ոչ մի արձագանք չստանալով**, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ստիպված ներկայացուցիչ ուղարկեց ս.թ. **մայիսի 04-ին** ժամը 12:00-ին նշանակված բանակցություններին մասնակցելու համար:

Հատուկ կցանկանայինք նշել, որ բանակցությունների ընթացքում մեր ներկայացուցչի հարցադրմանը, թե ի՞նչ պատճառով գնահատող հանձնաժողովը *չի արձագանքել* «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի **N1/30-04/30** առ **30.04.**2020թ. **պաշտոնական** նամակին և **չի մերժել «Հպարտ քաղաքացի»**, «**Այյուսնետվորկս**» և «**Էլեկտրոգրուպ**» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված *շտկված* Հայտերը, «**ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25**» գնանշման մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Սաղաթելյանը հանձնաժողովի նախագահ Ս.Շախվերդյանի *լուռ թողտվությամբ* լիովին լուրջ պատասխանել է, որ «... **Օրենքով** ապրանքի **ֆիրմային անվանման** նշման **անհրաժեշտություն** և **պահանջ չկա...»:**

Վերը նշված դրվագի վերաբերյալ հարկ է նշել, որ 16.12.2016 թ. «**Գնումների մասին**» ՀՀ օրենքում *նման գրառում* **ֆիրմային անվանման** վերաբերյալ իրոք **բացակայում է**, սակայն նույն օրենքի **5-րդ հոդվածով** սահմանված է **ՀՀ Կառավարության** կողմից *ի կատարումն նույն օրենքի* **պարտադիր ընդունման ենթակա իրավական ակտերի** սպառիչ ցուցակ, որոնց թվին է պատկանում նաև **ՀՀ կառավարության** 04.05.2017թ. թիվ **526-Ն** որոշմամբ հաստատված «**Գնումների գործընթացի կազմակերպման**» **Կարգը**, որով գնումների գործընթաց կազմակերպելիս (*էլեկտրոնային ձևով գնումների կատարման ժամանակ նույնպես*) **պարտադիր ղեկավարվում են բոլորը՝** թե Պատվիրատուները և թե մասնակիցները:

Համաձայն նշված Կարգի **21-րդ կետի,** այն է՝ «...պատասխանատու ստորաբաժանումը՝ **1)** *կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝* **ա.** *գնման առարկայի բնութագրերը:* ***Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ*** *տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը...»:*

Իր հերթին, նույն «**ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25**» գնանշման մրցույթի Հրավերի **4-րդ մասի (ՀԱՅՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ), 2-րդ ենթակետում** նույնպես առկա է պահանջ, այն է՝ «...2) իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող **ֆիրմային անվանումը** և **արտադրողի անվանումը** (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր): Բացի այդ, **ֆիրմային անվանումը** նշված է նաև *հանձնաժողովին Հայտի փաթեթով ներկայացվող* **Հավելված 1.1-ում:** Այսինքն, բոլոր Մասնակիցներնը *պարզապես պարտավոր էին* **պարտադիր** ներկայացնել **նշված տվյալները**:

Նույն օրը՝ ս.թ. **մայիսի 04**-ին *ARMEPS* համակարգի միջոցով՝ info@armeps.am պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ստացանք արդյունքների հրապարակման առ 21.04.2020թ. **N4 Արձանագրությունն,** որի **5-րդ կետը** (*Նիստը վերսկսելու վերաբերյալ*) նշում է, որ «...Մասնակիցների կողմից **արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են**, ինչով պայմանավորված հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով՝ որոշեց մասնակիցների հայտերը գնահատել բավարար...», իսկ **Արձանագրության 8-րդ կետը** (*Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ*) փաստում, որ «...ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի **34-րդ հոդվածի 6-րդ մասով** հանձնաժողովը որոշեց՝ հաստատել գնահատման արդյունքները, առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ-ին հայտարարել **ընտրված մասնակից**...», և վերջապես, նույն փաստաթղթի **9-րդ կետով** էլ սահմանվում է անգործության ժամկետ:

Ավելի ուշ նույն օրը՝ ս.թ. մայիսի 04-ին Տեղեկագրում հրապարակվեց նաև պայմանագիր կնքելու որոշման մասին Հայտարարությունը (*նշված առ 21.04.2020թ Արձանագրություն №4-ի և* պայմանագիր կնքելու որոշման մասին Հայտարարության *պատճենները՝ ընդամենը 4 (չորս) թերթ կցված են սույն բողոքին*):

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից, գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը **ուղղակիորեն** և **կոպիտ խախտել է** 16.12.2016 թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի **34-րդ հոդվածի** (Հայտերի գնահատումը)՝

- **1-ին մասի** դրույթները, այն է՝ *«...Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: **Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են...»:***

- **5-րդ մասի 2-րդ կետի** դրույթները, այն է՝ *«...հանձնաժողովը **գնահատում է** սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) **համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին,** և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը...»*

- **6-րդ մասը,** այն է՝ *«...հայտը գնահատվում է **բավարար**, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն **ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները...»:***

Բացի այդ, գնահատող հանձնաժողովը **ուղղակիորեն** և **կոպիտ** **խախտել է** ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված **«Գնումների գործընթացի կազմակերպման»** Կարգի՝

- **21-րդ կետի պահանջներն**, այն է՝ *«...պատասխանատու ստորաբաժանումը՝ **1)** կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝ **ա.** գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, **ֆիրմային անվանման**, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը...»*

- **41-րդ կետի պահանջներն**, այն է՝ *«...Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն **էլեկտրոնային թվային ստորագրությամբ,** ապա հանձնաժողովը **մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը**, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով **մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը...»:***

- **42-րդ կետի պահանջները,** այն է՝ «... Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը **գնահատվում է անբավարար** և **մերժվում է**...»:

Ուստի, **պաշտոնապես** ներկայացնում ենք պահանջ **«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25»** ծածկագրով գնանշման մրցույթի գնահատող հանձնաժողովի առ **21.04.**2020թ. **N4** Արձանագրության՝ **5-րդ** կետով, այն է՝ «...Մասնակիցների կողմից **արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են...»** և **8-րդ** կետով, այն է՝ «...առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Հպարտ Քաղաքացի» ՍՊԸ-ին **հայտարարել ընտրված մասնակից...»** կայացրած որոշումները՝ **համարել անվավեր,** իսկ **«Հպարտ քաղաքացի»**, **«Այյունետվորկս»** և **«Էլեկտրոգրուպ»** ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված Հայտերը՝ **մերժել**:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ տվյալները՝

- ՀՎՀՀ 01204713
- ՀՀ, ք.Երևան 0025, Խանջյան փող.50, «Թեքեյան բիզնես կենտրոն»
- «Ամերիաբանկ» ՓԲԸ, Հ/Հ 1570005003790100

Կից ներկայացվում է՝

- **«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25»** ծածկագրով գնանշման մրցույթի Հրավերի Հավելված №1՝ **«Տեխնիկական բնութագիր-ժամանակացույց»** պատճեն՝ ընդամենը **2** (երկու) թերթ.
- **«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25»** ծածկագրով գնանշման մրցույթի մասնակիցների՝ «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ առ **17.04.2020 թ.**, «Այյունեթվորկս» ՍՊԸ առ **21.04.2020 թ.** և «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ առ **20.04.2020 թ.** Հայտերի **Հավելված 1.1-ի** պատճենները՝ ընդամենը **4** (չորս) թերթ:
- **«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25»** ծածկագրով գնանշման մրցույթի գնահատող հանձնաժողովին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ կողմից **22.04.2020 թ.** ուղարկված էլեկտրոնային նամակի և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ **N1/30-04/22** առ **22.04.2020թ.** գրության պատճենները՝ ընդամենը **5** (հինգ) թերթ:
- **«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25»** գնանշման մրցույթի հանձնաժողովի քարտուղար Հ.Սաղաթելյանի՝ hermineh@parliament.am հասցեից **28.04.2020 թ.** ստացված մասնակիցների՝ «Այյունեթվորկս» ՍՊԸ առ

23.04.2020 թ., «Էլեկտրոգրուպ» ՍՊԸ առ **27.04.2020 թ.** և «Հպարտ քաղաքացի» ՍՊԸ առ **27.04.2020 թ.** Հայտերի **Հավելված 1.1-ի *շտկված*** տարբերակների պատճենները՝ ընդամենը **4** (չորս) թերթ:

- **«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25»** գնանշման մրցույթի հանձնաժողովի քարտուղար Հ.Սաղաթելյանի՝ hermineh@parliament.am հասցեից 28.04.2020 թ. ստացված էլեկտրոնային նամակի և Ծանուցման պատճենները՝ ընդամենը **2** (երկու) թերթ:

- «**ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25**» ծածկագրով գնանշման մրցույթի գնահատող հանձնաժողովին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ կողմից **30.04.2020 թ.** ուղարկված էլեկտրոնային նամակի և «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ **N1/30-04/30** առ **30.04.2020թ.** գրության պատճենները՝ ընդամենը **7** (յոթ) թերթ:

- «**ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/25**» ծածկագրով գնանշման մրցույթի գնահատող հանձնաժողովի **առ 04.05.2020թ. N4 Արձանագրության** և **Հայտարարության** պայմանագիր կնքելու որոշման մասին առ **04.05.2020թ.** պատճենները՝ ընդամենը **4** (չորս) թերթ:

- Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի՝ վճարման հանձնարարագիր **N 000090** առ 06.05.2020 թ., պատճենը՝ ընդամենը **1** (մեկ) թերթ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ
Գլխավոր տնօրեն՝ Ռ.Եսայան

Digitally signed by YESAYAN RUBEN 4005600360
Date: 2020.05.09 16:04:25 AMST